

Տոյակապք եւ գմբէթունիւք ծաղկեցեալք ի ձեռն բարեպաշտութեան միաբանից եւ կարգաւորաց, որք ի մերոյս վերոյիշեցեալ վարժապետէն եւ որք յայլոց¹, զորս ամենեսին պահեցեցէ Տէր Հաստատս, սակայն սանախապատիւ եւ անդրանիկ գոյով՝ կարգաւորելով եւ կառավարելով զնոսա՝ գլուխ եւ նախամեծար քարոզի: Քանզի սա է երբե-եւի, Քեր-

գրքերը դուրս հանել տալով ցանկեցի գտնուած ձեռագիրները, որոնց թիւը 100ի իսկ չհասաւ: Ի՞նչ եղած էին արգեօք: Հոս գտայ նաև Եղիշէի ընտիր օրինակ մը, գոթախտաբար մկնակեր (Տես իմ «Ծովքը» էջ 48—50): Եկեղեցական գգեսաններու մթերքին չհետաքրքրուեցայ:

1 Բաղէչ «այլ վանորայք չբնաղք» ըսուածներն են.

1. Խնորհարար Ս. Արտաշատի, որ Ամրտօլէն աւելի ընդարձակ է իւր վանք, իր փոքրիկ տաճարով. Բաղէչի Արեւելեան կողմը, հազիւ կէս ժամ քաղաքէն: Խնորհատարը վերաշինեց Աւետիք Արգ., Բաղէչի Առաջնորդը, որուն գերեզմանը Տաճարին դասին մէջ է հարաւային պատին կից, իւր պատկերն ալ նկարուած պատին վրայ, ըստ հնագոյն սովորութեան: [Էջմիածնի հայրապետներն ալ նկարել կամ սեւել կու տային երբեմն իրենց նկարները Տաճարին մէջ. եւ Սողոմոն ծերունի Վաթոյղիկոսն միայն իր նկարը սեւել տալու համար Վաթոյղիկոս եղաւ 791—792]: Խնորհատարը 10—12 տարիէ ի վեր բոլորովին նորոգուած է գեղեցիկ շէնքերով, Որբանոցը հոն հաստատուած է: — 2. Աւետի- իմ Աւետի- վանք (Ս. Ատուածածնի անուանով), քաղաքին Արեւելեան կողմը, ձորի մէջ. գրեթէ կից քաղաքին, գրեթէ լքուած վանք մը հիմայ: — 3. Գոթայ վանք (գարձեալ Ս. Ատուածածնի անուանով), կը կոչուի նաև Տարբալաքի Ս. Արտաշատի, տաարակներու շատութեան համար. Բաղէչի Արեւմտեան կողմը, որուն առջև, բացէն կը խոխոջէ խոցերով գետը: Գրեթէ այս ալ մօտիկ է քաղաքին՝ արեւմտեան կողմէն. Գոթա կամ Գոթ գիւղին կից, սակից է Գոթայ վանք կոչումը: Այս ալ նորոգուած է. Այսպէս Բաղէչ գրեթէ չորս կողմէն չորս վանք ունի իւր շէնքը: — Իսկ քաղաքին «Տոյակապ» եկեղեցիներն են 1. Վարդախ Ս. Նշան կամ Ս. Վիրակոս Եկեղեցի, ամուր, սիրուն շէնք մը գմբէթաւոր, Առաջնորդանիստ: 2. Ս. Գէորգ. 3. Ս. Սարգիս. 4. Հինգ խորան՝ Պետրոս եւ Պօղոս Առաքեալներուն անուանով: